Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-933[1]-14.06.2010-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔ

«ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-179 օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով՝

««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.1-րդ հոդվածով սահմանված եղանակով և ժամկետներում հաշվետվությունը (հայտարարագիրը) հարկային մարմին չներկայացնելու դեպքերում կիրառելի են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, «Հարկերի մասին» օրենքի 24-րդ հոդվածով և սույն հոդվածի 6-րդ մասի երրորդ պարբերությամբ սահմանված դրույթները:»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 9-րդ հոդվածի «ե» կետից հանել «պետական» բառը:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Պետական գրանցում ստացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցված ապահովադիրները համարվում են հաշվառված լիազորված մարմնում գրանցում ստանալու պահից:»:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 1-ից, բացառությամբ 1-ին հոդվածի: Սույն օրենքի 1-ին հոդվածն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներրորդ օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ Ի Կ

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովում 1-ին ընթերցման ժամանակ ներկայացված առաջարկությունների

NN	Առաջարկող	Առաջարկության բովանդակություն	Նշում առաջարկի ընդունման մասին
1	ՀՀ ԱԺ պատգամավորներ Ա. Նռանյան Ա. Մինասյան	ՀՀ կենտրոնական բանկում գրանցվող կազմակերպությունների նկատմամբ ևս կիրառել ՀՎՀՀ ստանալու լիազոր մարմիններում հաշվառման կանգնելու միևնույն եղանակը, այսինքն Կենտրոնական բանկում գրանցվող կազմակերպությունների գրանցում ստանալու պահին նույնպես ստանում են ՀՎՀՀ, ինչպես նաև համարվում հաշվառված հարկային և սոցիալական ապահովության լիազոր մարմիններում:	«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդվածը՝ «Ապահովադիրները պետական գրանցում ստանալու պահից համարվում են հաշվառված լիազորված մարմնում, իսկ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցված ապահովադիրները գրանցում ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր են հաշվառվել լիազորված մարմնում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:» խմբագրվել է հետևյալ կերպ՝ «Պետական գրանցում ստացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցված ապահովադիրները համարվում են հաշվառված լիազորված մարմնում գրանցում ստանալու պահից»:

2	ՀՀ կառավարություն	«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի առաջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությունով՝ ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15.1-րդ հոդվածով սահմանված եղանակով և ժամկետներում հաշվետվությունը (հայտարարագիրը) հարկային մարմին չներկայացնելու դեպքերում կիրառելի են Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, «Հարկերի մասին» օրենքի 24-րդ հոդվածով և սույն հոդվածի 6-րդ մասի երրորդ պարբերությամբ սահմանված դրույթները:»:	Ընդունվել է
3	ՀՀ կառավարություն	Հաշվի առնելով, որ օրենքի ընդունմամբ պայմանավորված անհրաժեշտ է ընդունել տեղեկատվության փոխանակման հարցերը կարգավորող իրավական ակտեր և մի շարք գործող իրավական ակտերում կատարել փոփոխություններ, ինչպես նաև ծրագրային ապահովման խնդիրները լուծել, առաջարկվել է օրենքի ուժի մեջ մտնելը հետաձգել երեք ամսով՝ 01.04.2011թ:	Ընդունվել է